(առանձին հայ ֆեոդալական տների ներկայացուցիչներ, հոգեւորականութիւն, առեւտրավաշխառուական դաս եւ այլն), այլեւ պարսկական տեղական իշխանութիւնների վարած դաժան հարկային քաղաքականութեան հետեւանքով ունեզրկուած հայ աշխատաւորական խաւերում: Տնտեսապէս քայքայուած, ունեզուրկ հայ աշխատաւորը ստիպուած դիմելով դաւանափոխութեան, ոչ միայն ազատւում էր կրօնական հալածանքներից, այլեւ հնարաւորութիւն էր ստանում տէր դառնալու մի շարք ազգակից ընտանիքների ունեցուածքին: Շղթայական հակազդեցութեան նման տարածուելով, օրէնքը աղճատում էր հայ միջնադարեան բազմանդամ ընտանիքի, համայնքի դաւանական եւ դրանով իսկ՝ ազգային դիմագիծը: Ունեւոր ընտանիքներն իրենց աղքատ ազգականների կողմից լարուող որոգայթներից ունեցուածքը փրկելու համար յաճախ ստիպուած էին դիմել պայքարի ամենակրաւորական ձեւերից մէկին՝ արտագաղթին:

Այն փաստը, որ եւրոպական աղբիւրները այս օրէնքի գործունէութիւնը եւ «նոր մահմեդականների» («ջադիդ-ուլ-իսլամների») առաջացումը բացատրում են օրինակ բերելով հայերին («եթէ որեւէ հայ մահմեդականանայ...»), եւս մէկ անգամ վկայում է, որ օրէնքը ընդունուել էր հիմնականում Իրանի ամենամեծ քրիստոնէական համայնքի՝ հայերի դէմ[1]*: XVII դարի նշանաւոր կաթոլիկ միսիոներ եւ շահական Իրանի խոշորագոյն գիտակ Ռաֆայէլ դիւ Մանը արձանագրում էր.* «Cette invention makiavéliste tente beaucoup de personnes de faire un faulx pas, tant pour sauver son bien que acrocher celuy d'autruy»[2]*:*

Այս եւ նման տիպի այլ տնտեսական լծակների ազդեցութեան տակ մահմեդականութիւն ընդունած հայերի թիւը փոքր չէր նաեւ Նախիջեւանում: Դեռ 1630 թ. մայիսի 21-ի խնդրագրով Օգոստինոս

1 *Տե՛ս, օրինակ,* Les six voyages de **Jean Baptiste Tavernier**, ecuyer baron d'Aubonne, *en Turquie, en Perse, et aux Indes*. T. I, Paris, 1679, p. 510; **Francis Richard.** *Raphaël du Mans missionnaire en Perse au XVIIe s.*, II, Estats et Mémoire, Paris: Société d'Histoire de l'Orient-L'Harmattan, 1995, pp.35-36; **Bedik P.** *Cehil Sutun*, Viennae, 1678, pp. 366-368; **G. Chinon.** *Relation nouvelles de Levant.* Lyon, 1671, pp. 292-294; **Poullet.** *Nouvelles relations du Levant.* Paris, 1668, p. 283-285; **Sanson.** *Voyage ou relation de l'état présent du royaume de Perse.* Paris, 1695, p. 199-202.

2 **Francis Richard.** *Raphaël du Mans missionnaire en Perse au XVIIe s.*, II, Estats et Mémoire, pp. 35.